**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 125-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-008-0413-0094 կադաստրային ծածկագրով 33,0 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Պավել Ալեքսանդրովիչ Գուսևին :

2.Պավել Ալեքսանդրովիչ Գուսևի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 267300 (երկու հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր ) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 16
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 126-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Վուրիկ, Նարինե, Հայկ և Ալվարդ Ավդալյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 31012023-06-0024 տրված 31.01.2023թ) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 14.02.2023-ի ՔԴ-159-23),

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացիներ Վուրիկ, Նարինե, Հայկ և Ալվարդ Ավդալյաններին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1)06-100-0055-0009 կադաստրային ծածկագրով 0,12296 հա բնակելի կառուցապատման հողամաս:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 փետրվարի 2023 թվականի N 127-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ Ք ՏԱՇԻՐ 06-008-0277-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մադլեն Դումիկյան Մարտիրոսի (անձ,՝AR0582767, տրված՝ 07/02/2018թ.) կողմից դիմումը (մուտք՝ 09/02/2023-ի ՄԴ-143-23), ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, (գրանցամատյան 281, 282),անշարժ գույքի տեխնիկական անձնագիր 18/05/1989, «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով, որ 0,095645 հա բնակելի կառուցապատման հողամասը և բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Մադլեն Դումիկյան Մարտիրոսի սեփականության իրավունքը Տաշիր համայնք, ք, Տաշիր 06-008-0277-0011 կադաստրային ծածկագրում գտնվող 0,095645 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3.Օրենքի ուժով ճանաչել Մադլեն Դումիկյան Մարտիրոսի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք, Տաշիր 06-008-0277-0011 կադաստրային ծածկագրով 0,095645հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ, բացի 2003 թվականի կառուցված 25,13 ք/մ ավտոտնակի և 0,42 ք/մ պարիսպի:

4.Տնատիրության տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց թիվ 372 բնակելի տուն (փոստային դասիչ՝21-02):

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
[illegible]

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 128-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 93-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0277-0011 կադաստրային ծածկագիր, 0,095645 հա նոր առաջացող գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 372 բնակելի տուն (փոստային դասիչ 2102) հասցեն:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ բնակելի տան հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
LORI REGION TASHIR MUNICIPALITY
РА ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ТАШИР
08966995

2023թ. փետրվարի 16
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 129-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշումով և հիմք ընդունելով համայնքային բյուջեի հաշվին իրականացված միջոցառումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,49688 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 06-081-0111-0009, գործառնական նշանակություն՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքերն փոխադրել ավելի բարձրաժեք հողատեսքի՝ 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակությամբ:

2. Գյուղատնտեսության, հողօգտագործման և բնապահպանության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանմանը և հողատեսքի սահմանված կարգով փոփոխություն արտացոլել համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 16
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 130-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 102-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 10-ի, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր 06-008-0111-0029 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի օրինականացման մասին» N 102-Ա որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

2) Հողամասի համար կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 2763312 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ / RA LORI REGION TASHIR MUNICIPALITY / ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ТАШИР / 06966995

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 131-Ա

## ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1034-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» թիվ 698-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավառության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 25-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի պարչական տարածքում գտնվող 06-008-1103-0001-ից կադաստրային ծածկագրով 0,03328 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը ուղղել կադաստրային քարտեզում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1034-Ն որոշումով հաստատված գլխավոր հատակագծի:

2. Փոխել 06-008-1103-0001-ից կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,03328 հա մակերեսով հողամասի գործառնական գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակության:

3.Հողամասի սահմանները որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. 06-008-1103-0001-ից կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,03328 հա մակերեսով հողամասին տրամադրել Տաշիր համայնք, ք. Տաշիր Էրեբունու փողոց, թիվ 1/2 (փոստային դասիչ 2101) հողամաս հասցեն:

5.Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 132-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՕՖԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Օֆիկ Բաղդասարյան»-ի 2023 թվականի փետրվարի 16-ի N20 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն, Վ.Սարգսյան փողոց, թիվ 5 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Օֆիկ Բաղդասարյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2023 թվականի   N 133-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԳԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արգինե Ավդալյան»-ի 2023 թվականի փետրվարի 16-ի N21 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն,Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 41 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արգինե Ավդալյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 134-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՄԵԾԱՎԱՆ 06-074-0091-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Գևորգի Մանգասարյանի (անձնագիր՝ AR0623124, տրված՝ 13.03.2018թ.) կողմից դիմումը (մուտք՝ 23 . 01 . 2023-ի ՄԴ-76-23), ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, (գրանցամատյան 111) հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գյուղական հանձնաժողովի 01 ապրիլի 1991թ. N-2 որոշումից 15.11.2022 թվականին տրված քաղվածքը, «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ դեկտեմբերի 25-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետերը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 93-Ն որոշումը, և այն, որ 06-074-0091-0005 կադաստրային ծածկագրով 0,085607 հա հողամասը և կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և ինժեներակրան տրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել են 1967 թվականին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Սարգիս Գևորգի Մանգասարյանի սեփականության իրավունքը Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0091-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 0,085607 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3.Օրենքի ուժով ճանաչել Սարգիս Գևորգի Մանգասարյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք գյուղ Մեծավան 06-074-0091-0005 կադաստրային ծածկագրով 0,085607 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Տնատիրության տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Կամոյի փողոց, թիվ 34 բնակելի տուն (փոստային դասիչ՝21-12)

5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ բնակելի տան հասցեավորման համար:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 135-Ա

### ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ՋԱՀՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ջեներալ Քեյբլ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձ Նարեկ Բաղդասարյանի (անձնագիր՝ 011372604, տրված՝ 08.10.2021-ին) դիմումը (մուտք՝ 16.01.2023-ի ԴԱ-01-23), անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 01062017-06-0027 վկայականը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 2-րդ գլխի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և հիմք ընդունելով կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023BJJՄCC ծածկագիրը նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Ջահուկյան փողոց, թիվ 3 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0111-0032) «Ջեներալ Քեյբլ» ՓԲԸ-ի կողմից արդյունաբերական օբյեկտների կառուցապատման 2.699 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 1735.5քմ մակերեսով արտադրամասը՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի

2.Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3.Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող «Ջեներալ Քեյբլ» ՓԲԸ-ին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900 275 081 124) ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝

1)Արտադրամաս (1) 687.7քմ 1060434 (մեկ միլիոն վաթսուն հազար չորս հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

2) Արտադրամաս (3) 928,53քմ 1431794 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր ինսունչորս) ՀՀ դրամ:

3)Պահակատուն (10) 23,57քմ. 36345 (երեսունվեց հազար երեք հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ:

4)Ծածկ (4) 37քմ. 57054 (հիսունյոթ հազար հիսունչորս) ՀՀ դրամ:

5)Պարիսպ (13, 14, 15) ընդամենը 58,7քմ. 90516 (իննսուն հազար հինգ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ:

6)Դուռ, պատուհան և միջնորումներ ընդհանուր թվով 210 հատ 215880 (երկու հարյուր տասնհինգհազարութհարյուրութսուն) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 136-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի փետրվարի 24-ին հրավիրել Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, 06-039-0059-0013 կադաստրային ծածկագրով 0.055695 հեկտար հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին:

7.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

8.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմե, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմ» «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին:

9.Հայաստանիի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի «Պարտեզ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի «Գույների աշխարհ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան գյուղի «Արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

12.«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը դրամական միջոցներ տրամադրելու մասին:

13.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Տաշիր